ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

(Օենդյան 100-ամյակի առթիվ)

Բանասիր. գիտ. դոկտոր Ս. Բ. ԱՂԱԲԱԲՅԱՆ

1934 թ. Ա. Խանջյանի կարգադրությամբ Եղիշե Չարենցը Գրական թանգարանից իր աշխատասենյակն է տեղափոխում Վահան Տերյանի ձեռագրերը, որոնք հարուցում են Հիշատակարանի հետևյալ գրառումը. «Մի զարմանալի քնքուշ և խնդագին զգացմունք եմ ունենում յուրաքանչյուր անգամ, երբ հիշում եմ, որ այնտեղ, գրասեղանիս դարակում, պահված են Տերյանի—հասկանում ե՞ք—իսկական նրա ձեռագրերը... նրա ձեռքով գրված այդ թերթիկները... Երբ անչափ տխուր եմ լինում—հանում եմ և՝ նայում... Կարծես արեգակն է պահված իմ գրասեղանի դարակում... Այդ մետաքսյա թերթիկները—ծածկված չինական սև մելանով, գրված չքնաղ, աղնվական գրերով... Զարմանալի մաքուր և գեղեցիկ ձեռագիր է ունեցել այդ մարդը։ Ձեռագիրն անգամ նուրբ է, ինչպես նրա ողջ ստեղծագործությունը—նուրբ ու մաքուր։ Իմ կյանքի ամենամեծ խնդությունն է դա՝ հանել մեկ-մեկ այդ ձեռագրերը և նայել...

— Օ, հեռու ընկեր իմ, օ Վահան Տերյան...»[1]։

Նույն Հիշատակարանում Չարենցը նկարագրում է հողեղեն, իրական Տերյանին՝ Թիֆլիսի Բարեգործական թեյատանը, Կարա-Դարվիշի հետ զրուցելիս։ Չարենցը գրում է. «Ինձ համար Տերյանն այն ժամանակ ոչ միայն հանճարեղ պոետ էր, այլև միֆական անձնավորություն... Իմ տպավորության մեջ անջինջ մնաց նրա թուխ, մի փոքր դեղնավուն, խիստ հայկական դեմքը և սև աչքերի խոնավ նայվածքը. նրա դեմքին կարծես մշուշ կար և նրա աչքերը այդ մշուշի միջից նայում էին խոնավ նայվածքով... Դեմքը թեկուզև հայկական էր, մի փոքր կոպիտ դիմագծերով, սակայն թողնում էր ծայր աստիճանի կրթված, մտավոր աշխատանքով ապրող մարդու տպավորություն։ Դեմքի վրա կար հիվանդագին հոգնածության կնիք—և նրա կերպարանքն ամբողջովին համապատասխանում էր նրա պոեզիային...»[2]։

Չարենցն ունի Վահան Տերյանին բնութագրող բանաստեղծական բազմաթիվ Զոներ՝ սկսած Վերադարձի կանչից (1927 թ.) մինչև կյանքի վերջում (1937 թ.) գրած Տաղերը՝ «նահրյան խոսքերի գանձարանի» թեմաներով։ Նրա բնութագրություններից թերևս ամենասպառիչը հետևյալն է. «Սրտաբեկ, տրխուր պոետ արևավոր»։ Արդարև, Վահան Տերյանի բանաստեղծական աշխարհը տխրությունների և արևալույսերի, ազգային թախծությունների և ազգային մաքառումների, հոգեկան ընկրկումների և հոգեկան բոցավառումների, անձնական և վերանձնական ապրումների մի հրաշալի համադրություն է։

Համադրականության՝ շաղախի, այդ որակով Վահան Տերյանը երևաց արդեն 1908-ին հրատարակած «Մթնշաղի անուրջներ» իր առաջին գրքում,

---

1 Ե. Չարենց. Երկերի ժողովածու. հ. 6, Երևան, 1967, էջ 477։

2 Նույն տեղում, էջ 480—481։

ուր տխրություններ, մոռացումներ, անհայտ ճանապարհներ, անլույս գիշերներ, անջատումների պատկերային շարքերի կողքին տեղ ունեին նաև լուսեղեն գարունների, լուսաբացների, արևների, երկունքների պատկերային խորհրդանշանները։

Մինչաղային հեռապատկերների և կապույտ մշուշների միջից Տերյանի առաջին իսկ գրքում իր հայտնությունն է ազդարարում գարնան և արևի զարթոնքը.

Եվ ահա կրկին գվարթ ու ջահել,
Դուրս ելա տխուր մենության բանտից,
Պայծառ աչքերդ ողջունում են ինձ,
Եվ ես չեմ կարող իմ ճիշը պահել։

Բացել ես իմ դեմ ոսկեղեն հեռուն,
Ծաղկել ես սարում, անտառում, արտում...
Որքան երգեր են հնչում իմ սրտում,—
Ողջո՜ւյն քեզ արև, ողջո՜ւյն քեզ գարուն...

Սիմվոլիստների բանաստեղծական մոդելներով հափշտակված Վահան Տերյանը, ինչպես իրեն ամենից հարազատ սիմվոլիստը՝ Ալեքսանդր Բլոկը, ոչ միայն չի մեկուսանում «փղոսկրյա աշտարակում», այլև խորհրդանշանները նյութականացնում է իրական կյանքի գունագծերով։ Սա է նրա պոեզիայի թերևս ամենաբնորոշ առանձնահատկությունը՝ առարկայական, նյութականացած խորհրդանշանների արվեստ, որը Վ. Տերյանին մերձեցնում է Ալ. Բլոկի գեղարվեստական աշխարհի մեջ կատարվող խմորումներին։ Հայտնի են Ալ. Բլոկի պարբերական գանգատները սիմվոլիստական բանաստեղծական ուղղության անձուկ սահմաններից, կեցության այրող հասարակական հարցերի հանդեպ նվազ ուշադրությունից։ 1908 թ. Բլոկը գրում է Կ. Ստանիսլավսկուն. «Մենք իրավունք ունենք դառնալու ռեալիստներ՝ նոր բովանդակությամբ»[3]։

Վահան Տերյանը ևս, հայտնվելով սիմվոլիստական գեղագիտության ազդեցությունների ոլորտի մեջ և գնահատելով այդ ուղղության մի շարք գեղարվեստական շերտերը, օրինակ, երազելի հանգրվանների՝ հեռավոր աշխարհների որոնման, ուղիների անորոշության, սիրո անհասության, գեղեցկությունների փլուզման վերապրումները, այդուամենայնիվ իր կռահումներից, երազներից ու տեսիլքներից շարժվում է դեպի կյանքը, դեպի իրականությունը։ Դրա ցայտուն արտահայտությունն է մարդու մենակության թեմայի գրված լայն տեղը Վ. Տերյանի քնարերգության մեջ։

Դարասկիզբը համարվում է «անճանապարհ» ժամանակ։ Մարդու ճանապարհն անցնում էր հոգսերի, ցավերի, տառապանքների միջով, մի խոսքով՝ մարդու հոգևոր աշխարհի առջև ծառացած փակուղիներով, որոնք հարուցում էին ողբերգական շեշտեր։ Վ. Տերյանը «որսում էր» մարդուն բաժին հասած այդ շեշտերը՝ դրանով իսկ իր քնարը հարստացնելով դարաշրջանի պատմահասարակական բովանդակությամբ։

Անտարակույս, Վ. Տերյանի բանաստեղծությունները, հատկապես 900-ական թթ. գրածները, սրտաքնապես թողնում են բացառապես ինքնասուզումների տպավորություն։ Այնինչ, իրականում, դրանք արտահայտում են նույն այդ թվականների բնորոշ ընդհանրական հոգեբանությունը, մարդու հոգեկան աշխարհի տեղատվություններն ու մակընթացությունները, ժամանակի տեղաշարժերը։

Մարդու մենակության տերյանական մոտիվն ունի բանաստեղծական մի շարք դիպուկ բանաձևեր, որոնցից թերևս ամենասպառիչը և տարողունակը 1915-ին գրած հետևյալ բանաստեղծությունն է.

---

[3] Ал. Блок. Собр. соч. в 8-ми томах. Т. VIII. М., 1963, с. 266.

Մենք բոլորս, բոլորս
Մանուկներ ենք որբ.
Մանուկներ ենք մենք կորած—
Հավիտյան անմայր.
Մենք բոլորս մոլորված
Աշխարհում խավար...

Մենք նետված ենք բոլորս
Երկիրն այս հեռու,
Կանչում ենք միշտ—ձայն չկա,
Աղոթում ենք—ո՞ւմ,
Ո՞վ կլսիրկի, ո՞վ կլգա,
Որ տանի մեզ տուն...

Ունենալով նման պատկերացում «մարդու և ժամանակի» հարաբերության վերաբերյալ, Վ. Տերյանը, բնականաբար, պետք է դիմեր մարդկային կյանքի ողբերգական իրադրությունը ամոքող դեղաթափերի։ Բանաստեղծի համար այդպիսի խարիսխ է դառնում, նախ և առաջ, Սերը, որի «առաքելությունը» ձևակերպված է մի շարք խոստովանությունների մեջ.

Դու կգաս ու կրկին հնքիաթով կլցությեես,
Լուսերես կլցրես մառախուղն իմ հոգու...

Եվ ապա՝

Սև թախիծն իմ սրտից, մութ խոհերն իմ հոգուց կրգնան,
Լույսիդ դեմ կլցրվեն ըստվերները մռայլ,
Տառապանքը քեզ հետ քաղցր հուշ և խոսքերդ խորհուրդ
Կրդառնան, կլնագնեն ուրիշ փայլ։

Մի ուրիշ բանաստեղծության մեջ Տերյանը գրում է.

Կյանքս մութ էր, հոգիս ցաված ու խավար,
Եվ օրերս—միայն ցավ.
—Իմ սև երկրում ժպտացիր դու լուսավառ...

Զարմանալի մի հետևողականությամբ Վ. Տերյանը գրում է ցավի ու տառապանքի մասին և նույնպիսի հետևողականությամբ Սիրո Լույսից է սպասում իրեն համակած տագնապների ու տխրությունների փարատումը։

Հենց այստեղ էլ պետք է ընդգծել, որ Վ. Տերյանի քնարերգությունը չունի այսպես կոչված անցումային որակներ. բանաստեղծությունների թվագրությունից պարզեիպարզ երևում է, որ գրական առաջին փորձերից մինչև կյանքի վերջին շնչում գրած բանաստեղծությունը («Գինով եմ, գինով եմ...») Վ. Տերյանը եղել է միասնական, արտահայտելով և անձնական տագնապների, և՛ հասարակական, վերանձնական ապրումների բարդ ելևէջը։ Բանն այն է, որ իր աշխարհազգացական կոորդինատներով լինելով անձնական ցավերը հասարակական գործոններով մեկնաբանող գեղագետ, Վ. Տերյանը յուրաքանչյուր նոր բանաստեղծություն գրելիս իր հոգու խորքերին նայելուց բացի նայել է նաև ժամանակի դեմքին՝ գտնելու ապրումների պատճառակցականությունը։

Այսպես, նրա բանաստեղծական աշխարհն են թափանցում մոլորաշրջիկ-թափառաշրջիկները, որոնք, ի տարբերություն հայոց բանաստեղծության դարավերջյան պատմության մեջ լայն տեղ գրաված պանդուխտների, արտահայտում են դարասկզբյան «մոլորյալների»՝ «բեկված հոգիների», տրամադրությունները։ Այդպիսի բովանդակություն ունի, օրինակ, «Փողոցի երգը»՝

Պատուհանիս տակ լալիս է կրկին
Թափառիկ երգչի երգը ցավագին,—

Տխուր այդ երգը վաղուց եմ լսել,
Կարծես թե հս եմ այդ երգը հյուսել,
Կարծես թե ես եմ լալիս այդ երգում,
Կարծես թե քեզ եմ կարոտով երգում։

Կյանքի որբերը՝ անօթևան թափառաշրջիկները, անտուն մոլորյալները, հոգնած ճամփորդները, միայնակ երազողները, պատրանքների և ցնորքի գերիները նայում են լուսեղեն հեռուների կողմը՝ գտնելու հոգեկան դաշնության հովիտները.

Հեռու երկրի լուսե հովտում
Օրերն ուրիշ երգ են հյուսում.
Կյանքից հոգնած սիրտըս տրտում
Այն երկիրն է միշտ երազում...
Խաղաղությունն այն հեռանիստ,
Ուր մի ուրիշ արևի փայլ
Ծավալում է անանց հանգիստ
Եվ խնդություն մի անայլալ,
Մի խնդություն մաքուր ու խոր,
Եվ անեղերք և անվախճան,
Ուր քո սիրտը որբ ու մոլոր
Գրկում է մի ոսկե շրջան...

Տերյանական մայրամուտային անուրջների և տխրությունների վրա դժվար չէ նկատել իր ամենասիրելի գրողներից մեկի՝ Ա. Պ. Չեխովի ստեղծագործության կնիքը։ Այդ են վկայում Անթառամ և Մարթա Միսկարյաններին գրած այն նամակների չեխովյան հղումները, որ 1970-ին «Неизданные письма» խորագրով և իր ջերմ առաջաբանով հրատարակեց բանաստեղծի դուստր Նվարդ Տերյանը։ Այդ նամակներում մի քանի անգամ հիշատակելով Չեխովի անունը, Վ. Տերյանը իբրև ստեղծագործական առանձնահատկության փաստ ուշադրություն է հրավիրում «տխուր ուրախության» մոտիվի վրա։ 1908 թ. դեկտեմբերի 20-ին Անթառամ Միսկարյանին գրում է. «Իմ հոգում ինչ-որ լուսավոր հնազանդություն է և մեղմ ուրախություն։ Այդ ուրախությունը նման է այն բանին, ինչ զգում ես՝ գիտելով որևիցէ մեծ գեղեցկություն։ Դա աղմկոտ ուրախություն չէ, դա, եթե կարելի է ասել՝ «տխուր ուրախություն» է, որը չի սարսափում մենությունից և ձգտում է մենակության։ Այդ ուրախությունը նման է այն տխրությանը, որը, ինչպես ասում է հանճարեղ Չեխովը «Երկու գեղեցկուհի» պատմվածքում, առաջանում է գեղեցկության հետ շփվելիս»[4]։

Չեխովյան պաշտամունքը անհետք չի անցել։ Չեխովի կնիքը մասնավորապես զգացվում է այն բանաստեղծությունների վրա, որոնց «գործող անձինք» են նրբակիրթ, գերզգայուն, իրենց հոգեկան ներաշխարհի մեջ սուզված, լուսեղեն անուրջներով գերված մտավորական խավի ներկայացուցիչները։ Մթնշաղային անուրջը ժամանակի գլխավոր շեշտն էր,—դրանով է բացատրվում Վ. Տերյանի քնարերգության հարազատությունը «Ճայից», «Բալենու այգուց», «Երեք քույրերից», արձակ պատումներից ճառագող լուսավոր տխրության տրամադրությանը.

Եվ իջնում է մի անսահման թախիծ։
Հիշում եմ նորից օրերըս մեռած,
Տրխրություններս անուշ ու անբիծ
Եվ ընդմիշտ անդարձ անուրջ ու երազ...

Վ. Տերյանը ունեցել է նաև հուսահատության, օրերի անդարձության կեղեքիչ հոգեկան պահեր.

Իջել են մթին խոհերը վրաս,
Սառն է հիմա իմ գիշերը անափ.—
Եվ չկա ոչ մի լուսեղեն տազնապ,
Եվ ոչ մի երազ և ոչ մի երազ...

---

[4] В. Терьян. Неизданные письма. Ереван, 1970, с. 77.

Անուրջներն ու երազները այլևս երևում են անդարձության խորհրդանշանով («Ես օտար եմ արդեն այն հողին, ուր վեհ էր երազը...», «Էլ ոչ մի կանչի էլ ձայն չեմ տալիս...», «Անվերջ վհատում և դառնություն է լցված իմ հոգում», «Ոչ անուրջ կա ապստրդյուն, ոչ սեգ ըղձանք ու խոկում», «Իմ հոգում է անվերջ սուգ ու լաց», «Միայնություն իմ հոգու մեջ», «Իմ մենակ սիրտն է ցավագին ճչում» և այլն, և այլն)։

Մասնավորապես «Գիշեր և հուշեր» բանաստեղծական շարքը ողողված է անելանելիության նման ապրումներով, որը բանաստեղծին, բնականաբար, թելադրում է «մի ուրիշ աշխարհի կարոտը»։ Ռուս մեծ բանաստեղծ Ֆ. Տյուտչևի «И новый мир увидел я» մուտքային բնաբանով Վ. Տերյանը կառուցում է «Ոսկի հեքիաթ» շարքը, ուր «Գիշեր և հուշեր» շարքի անդարձության գլխավոր հուզապրումին փոխարինում է Անտրտունջության գլխավոր մոտիվը։

«Գիշեր և հուշեր» շարքում նույնպես կային Resignation-ի՝ հնազանդության խոնարհության շեշտեր, սակայն «Ոսկի հեքիաթի» մեջ դա դառնում է որակ՝ հետևյալ բանաձևով.

Սիրտ իմ հոգնած, մեղմ օրհներգիր,
Հնազանդ ու ցնորուն,
Երկինք ու ծով, ամպ ու երկիր,
Այս մարգերն ու այս առուն։

Եղիր դու էլ պայծառ ու հեզ.—
Հեքիաթ, հանգիստ ու երազ...

Մթնշաղյան անուրջներին հետևում են գիշերային ժամերի մռայլ խոկումները, որոնց էլ հետևում են «նոր աշխարհի» ոսկի հեքիաթները։ Այս անցումները, ըստ էության, շրջապտույտ են հոգեկան աշխարհի պարունակներում, ուր, ինչպես արդեն ասել ենք, ճակատագրական դեր է ստանձնում Սերը՝ այս բառի ամենահարուստ բովանդակությամբ։ Սիրո՝ գոյության սկզբնաղբյուրի, մեծարման իր հայացքով Վ. Տերյանը ձեռք է պարզում «համընդհանուր սիրո» քարոզչի՝ Լև Տոլստոյի ուսմունքին, այն գեղարվեստագետի, որը եղել է իր կուռքը։ Դեռ ծննդավայրում՝ Գանձայում, հայրը՝ Տեր-Սուքիասը, իր որդուն դասեր է տվել «տոլստոյականության» գլխավոր կետերից՝ սեր, բարություն, խիղճ, կարեկցություն, գթություն, անձնազոհություն և այլն։ Տերյանի «տոլստոյական կողմնորոշումը»՝ «համընդհանուր սիրո» ուսմունքի յուրացման սլաքով, տեղ է գտնում և՛ ճեմարանական պարապմունքների, և՛ համալսարանական դասընթացի մեջ։ Ինչպես գրում է նամակներում Վ. Տերյանը, համալսարանում հատուկ օրեր ու ժամեր է առանձնացնում Լև Տոլստոյի գրականությունը և կյանքը ուսումնասիրելու համար։ Տոլստոյական պաշտամունքի մի դրվագն է մասնակցությունը «մեծ ծերունու» թաղմանը Յասնայա Պոլյանայում, այն արարողության, որի մասին պատմում է «Հորիզոն» թերթում տպագրած երկու նշանակալից թղթակցությունների մեջ։ Լև Տոլստոյը Տերյանի համար «աշխարհի գրողն» էր, ուստի և իր բանաստեղծություններով ևս նա ընդառաջ էր գնում «կյանքի ուսուցչի» դավանանքին, որոշ սահմաններում միստիֆիկացնելով նրա ուսմունքի պատվիրանները։ Սիրո, խղճի, բարության և այլ տոլստոյական արմատներ ունեցող հասկացությունների մեջ Վ. Տերյանը դնում էր խորհրդավոր բովանդակություն։ Դա նկատել է անգամ Մ. Գորկին՝ Վ. Տերյանին հռչակելով «միստիկ»։ Լև Տոլստոյը,— Վ. Տերյանի գնահատությամբ,— մարդկանց մոռանալ է տալիս առօրեական հոգսերը և միացնում է նրանց՝ «ապրելու նրա ոգու, նրա մտքերի, նրա մեծության լույսի մեջ»[5]։ Բնորոշ է նաև նույն թղթակցության հետևյալ հատվածը. «Ես չեմ կարողանում հավատալ, որ չկա Լև Տոլստոյը՝

5 Վ. Տերյան. Երկերի ժողովածու. հ. 2, 1962, էջ 214—215։

մեր սիրտը մխիթարող, մեր խիղճը արթնացնող, մեր չնչին վատությունը վեհանձնաբար և սրտագին ներելու և արդարացնելու զորությունն ունեցող միակ մարդը։

Կարելի է չհամաձայնել Լև Տոլստոյի այս կամ այն կարծիքին, սակայն նրա իդեալը՝ մեր բոլորիս իդեալը պետք է լինի, որովհետև նա անժխտելի է և հավիտենական։

Մենք ամենքս կրկնություններ ենք—Տոլստոյը անկրկնելի է»[6]։

Լև Տոլստոյի ոգին ու լույսը աներկբայորեն իրենց հետագիծն են թողել Վ. Տերյանի բանաստեղծական աշխարհի վրա, ինչպես սիմվոլիստների, առաջին հերթին՝ Ալ. Բլոկի, ինչպես մայրամուտների երգչի՝ Ա. Պ. Չեխովի երազներն ու ցնորքները։

Դեռ 1912 թ., նախազգալով իր ժողովրդին սպասվող ահավոր աղետը, Վ. Տերյանը գրում է.

Փշով են պատած ուղիները մութ,
Մեր տեսիլքները սառն ու ահավոր,
Մեզ գգվում են միշտ գդվանքով մի սուտ,
Մեզ խաչ են, խաչ են հանում ամեն օր...
Մութ է, և ցուրտ է, և բուք, և բորան,
Մեր ուղիներում սարսափ է և մահ
Արյունոտ ուղի... երանի նրան,
Ով հայրենական տուն ունի հիմա...

«Հայրենական տան» երազը Վ. Տերյանի համար այն խարիսխն էր, որով հակադրվում էր անլույս, խավար, աղետաբեր իրականությանը։ «Հայրենական տան» երազանքի մեջ լսվում են իր տարաբախտ հայրենիքի զավակների ձայներն ու ճակատագրական զգացողությունները, այն ձայները, որոնք Վ. Տերյանի քնարերգությունը հարստացնում են հայրենիքի բազմակողմանի կերպարով։ Թեև իր բանաստեղծական առաջին քայլերից սկսած Վ. Տերյանը ապրել է հայրենիքի կարոտի զգացմունքներով («Ես անջատված եմ հայրենի հողից, հայրենի տունը՝ իմ սրտին օտար» և այլն), սակայն «Հայրենիքը» նրա քնարերգության «առանցքներից» է դառնում 1912—1917 թթ. ընթացքում։

Հայրենիքի «անհատականացումը» ունի պատմահոգեբանական խոր բացատրություն։ Վկայությունն են Վ. Տերյանի այդ տարիների հրապարակային ելույթները և նամակները, մանավանդ Նվարդ Թումանյանին գրած «ծրագրային» խոստովանությունները։ 1914-ին Տերյանը գրում է. «Վերջ ի վերջո ես սկսում եմ գալ այն եզրակացության, որ մեր հայրենիքի ցավը մեզ այնպես է մաշում, ջլատում, կեղեքում, որ մենք դառնում ենք անընդունակ ուրիշ բան հասկանալու կամ անելու։ Դա մի հիվանդագին սեր է, դա մի անհաղթելի մոլություն է—դրա պրիզմայով է բացվում մեր առջև աշխարհը—այդ չափով ենք մենք մոտենում ամեն ինչի... Այդպես մեր հայրենիքի ոգին է մեռնում, իսկ մարդիկ կարծում են, թե կարելի է նրան կենդանացնել...»[7]։

Հայրենիքի տառապանքը հավասարեցնելով իր ինքնությանը («ինչպե՞ս ազատվես ինքդ քեզանից»), Վ. Տերյանը նույն նամակում հայտնում է. «Դուք երևակայել չեք կարող, թե ինչպես է անցնում իմ կյանքը. ոչ թե անցնում է, այլ այրվում մի ներքին դառն կրակով, և ես անզոր եմ այդ կրակի դեմ և անօգնական։ Եվ ես երբեմն մտածում եմ, որ դա ունի իր խորին և վսեմ իմաստը։ Չէ՞ որ այդպես, իմ հոգու նման, այրվում է և իմ երկիրը, «իմ Նաիրին»—գուցե դրա համար է այրվում և իմ հոգին, որովհետև իմ հոգու մեջ «Նաիրյան չքնաղ հոգին է» այրվում։ Եվ ես սկսում եմ զգալ ինձ կոչված

6 Նույն տեղում, էջ 216։

7 Նույն տեղում, հ. 3, էջ 360։

մեկը նրանցից, որոնց վիճակվել է «Նաիրյան» հոգու բարձր տառապանքը կրել իրենց հոգու մեջ»[8]։ Այս մտորումը վեր է հայրենիքի սիրո սովորական խոստովանությունից։ Այդ մտորումը մի վերջավորված, ամբողջական դավանանք է՝ կառուցված ճակատագրական այն տարիներին, երբ Նաիրյան հոգու բարձր տառապանքի վերլուծությունն ու գնահատականը դարձել էր հայոց հասարակական կյանքի օրակարգի գլխավոր կետը։

«Հոգևոր Հայաստան» նշանավոր հոդվածում (1914 թ.) Վ. Տերյանը գրել է. «Հայկական հարցը նորից վիճաբանությունների առարկա է դարձել, նորից ամբողջապես կլանել է հայ հասարակության բոլոր խավերի ուշադրությունը... Ամեն մի հայ ներկա տագնապալի ու աղետավոր ժամին բնականաբար ջանում է թափանցել մշուշոտ ու անհայտ ապագայի խորքը իր հիվանդագին տարակուսանքների լուծումն որոնելով... Հայության համար չափազանց կարևոր, կյանքի և մահու խնդրի բնավորություն ստացած այդ տարաբախտ հարցը իրերի ներկա դասավորությամբ դրված է հրապարակի վրա իր ամբողջ ծանրությամբ, անթիվ հույսերի, ցնորքների, մտահոգությունների, գուշակությունների և դատողությունների ժխոր ստեղծելով»։ Այնուհետև՝ «Արդեն թվում է, որ եթե անդամ այդ Հայաստան կոչված դժբախտ երկրում ոչ մի հայ չմնա, մենք դարձյալ պիտի այրվենք նույն իղձերով, նույն ցավադին, մեզ համար մի տեսակ կրոնական գունավորում ստացած այդ խնդրով։

Այդ հարցի այս կամ այն լուծման ծանր տարակուսանքներով և ոսկի երազներով սերունդներ են կրթվել, այս հարցի շուրջը պտտվող գրականությամբ սնվել են սերունդներ, հայության համար մի ցավոտ ցնորք է դարձել այդ «Հայաստանը», մի ավետյաց երկիր, դյութական մի անուն»[9]։

Նամակներում և «Հոգևոր Հայաստան» հոդվածի մեջ արտահայտված ցավագին շունչը աներկբայորեն տեղ է գտել «Երկիր Նաիրի» շարքում և մյուս այն բանաստեղծություններում, որոնք պատմում են ազգային ճակատագրից՝ փրկության սպասումներից մինչև փրկության հավատը։

Վերին աստիճանի հատկանշական է այն փաստը, որ «Երկիր Նաիրի» շարքում տեղ է գտել «Մի՞թե վերջին պոետն եմ ես» տագնապալից հարցումով սկսվող բանաստեղծությունը, ուր ահերով ու մահերով լցված Վ. Տերյանը երազում է.

Վտարանդի, երկրում աղոտ
Լուսե՞ղ, քեզ եմ երազում,
Եվ հնչում է որպես աղոթք
Արքայական քո լեզուն...

1913-ին գրած այս բանաստեղծության շուրջը ձևավորվում է «Երկիր Նաիրի» շարքը, ուր մեր հայրենասիրությունը նվաճում է նոր բարձունքներ՝ և՛ գաղափարական շեշտերի, և՛ ձևական կատարելության առումներով։

Շարքի համար Մ. Յու. Լերմոնտովից քաղված բնաբանը՝ «Люблю отчизну я, но странною любовью», կանխորոշում է հայրենասիրական զգացմունքների արտահայտման ուղղությունը։ Ի տարբերություն XIX դարի ազգային-հայրենասիրական քնարի ռազմերգական ուղղության, ռազմականչերի և ազատության նահատակների մեծարանքների, Վ. Տերյանի հայրենասիրությունը դառնում է ավելի ներհուն և ավելի խորքային։

Անտարակուսելի է, որ Տերյանը առանձին դեպքերում բանավիճում է անգամ XIX դարի ռազմերգության հետ, առաջադրելով հայրենիքի իր նոր կոնցեպցիան.

Դու հպարտ չես, իմ հայրենիք,
Տրտում ես դու և իմաստուն,
Կիզում է քեզ մի հուր կնիք,
Մի հրմայող ու հին խոստում։
Եվ միթե այդ վշտիդ համար
Չեմ սիրում քեզ այսպես քնքուշ

8 Նույն տեղում, էջ 361։

9 Նույն տեղում, հ. 2, էջ 303—304։

Եվ խոնարհվում քեզ պես համառ,
Ո՜, հայրենիք, գառն ու անուշ...
Զըշլացա խնդուն փառքիդ
Անցյալ ու հին փայլով երբեք.—
Սիրեցի հեզ, անքեն հոգիդ,
Եվ երգերդ մեղմ ու բեկբեկ,
Խեղճությունդ խավար ու լուռ,
Ադոթքներդ գառն ու ցավոտ,
Ջավակներիդ զարկը ալխոտ,
Եվ խուզերիդ լույսերն աղոտ...

Երբ այս բանաստեղծության հեզ ու խոնարհ հայրենիքի գծանկարը համեմատում ենք շարքի մյուս բանաստեղծությունների հնչերանգների հետ, ամենևին էլ չենք տարակուսում, որ Վ. Տերյանի ցավագին և «տարօրինակ» սերը չի պարփակվում լոկ հնազանդության և տրտմության սահմաններում։ Տրտմությունը, իհարկե, մեծ բաժին ունի հայրենիքի ճգնաժամային կացության վերապրումների մեջ («Ու հոգնած քայլով ահա կրկին վերադառնում եմ հայրենի հող», «Այնպես անխինդ են և նրման լային նոգերն իմ երկրի, այնպես տիրագին», «Երկիրն իմ անբախտ և ողեսավոր», «Երգում է զանգը լալկան» և այլն), այն Տրտմությունը, որի հիմքի վրա կառուցվեց ազգային բանաստեղծության այս մարգարիտը.

Մշուշի միջից,—տեսիլ դյութական,—
Բացվում է կրկին նաիրին տրտում,
Ո՞ր երկրի սրտում թախիծ կա այնքան,
Եվ այնքան ներում—ո՞ր երկրի սրտում...
Որտե՞ղ են քարերն այնպես վիրամարմար
Ձեռների նման պարզված երկնքին,
Որտե՞ղ է աղոթքն այնպես վեհ ու պարզ
Եվ զոհարերումն այնպես խնդագին...
Որտե՞ղ է խոցում այնպես չար ու խոր
Սիրտը մարդկային դաշույնը քինոտ,
Որտե՞ղ է հոգին այնպես վիրավոր,
Եվ անպարտ երկիրն այնպես արյունոտ...

Տերյանին շատ հարազատ, ընդհատում չունեցող տխրագին հնչերանգները բնավ էլ չեն նշանակում, թե նրան հարազատ չեն նաև մաքառման ու հավատի տրամադրությունները։ Ճիշտ հակառակը։ Վ. Տերյանը իր քնարերգության շտեմարանների մեջ հավաքելով ժողովրդական ցասման և ըմբոստացման, արիության և խռովության պաշարները, «յոթնապատիկ խոցված Տիրամորը» հրահանգում է.

Վառիր երկունքի գիշերում խավար
Հրով մկրտված նաիրյան հոգին...

Վհատության՝ ազետի իսկ օրերին, Վ. Տերյանը գրում է նաիրյան երկրի գալիքի հանդեպ հավատով լի բանաստեղծություններ.

Ամրակուռ է մեր հոգին—դարերի զավակ՝
Շատ է տեսել մեր սիրտը ալեր ու կրակ։

. . . . . .

Բարբարոսներ շատ կգան ու կանցնեն ան՛ետ,
Արքայա՛կան խոսքը մեր կբնա հավետ...

Դժվար չէ նկատել, որ իր հայրենասիրական նվագներում Վ. Տերյանը գաղափարաբարոյական չափանիշների հարազատություն է հայտաբերում անցյալ դարաշրջանների հայ գրականության ավանդների հետ՝ սկսած Մովսես Խորենացուց մինչև Խաչատուր Աբովյան և Միքայել Նալբանդյան, այստեղից էլ մինչև Հովհ. Թումանյան ու Ավ. Իսահակյան, ժողովրդին անշահախնդիր ծառայության ավանդները։

Վահան Տերյանի համար Նաիրին ետնաշխարհ չէր, այլ կենդանի, հզոր Ապագա, որին և ուղղված էր նրա հայացքը.

Երկնի՜ր իմ երկիր հավատով անմար,
Սուրբ է քո ուղին և պոակըդ՝ վեհ...

Եվս մի շատ էական առանձնահատկություն. հայրենիքը Վ. Տերյանի համար ոչ միայն աշխարհագրություն է, այլև ժողովուրդ, աշխարհագրության և ժողովրդի միասնություն, ժողովրդյան հայրենիք։ Այս կետում Վ. Տերյանը հաղորդակցության էր գնում Հովհ. Թումանյանի հետ, որը նույնպես այն մրտքին էր, որ գրականության հայացքը պետք է նետվեր ոչ թե Մասիսի վեհափառ գագաթներին, այլ նրա հովանու տակ ապրող ժողովրդին, մարդկային բազմություններին ու անհատներին։

Այսպես, Տերյանի քնարերգության մեջ հայրենիքի խորհրդանշան է դառնում Մայրը, որին ձոնում է իր ամենատպավորիչ և հուզական բանաստեղծություններից մեկը.

Կարծես թե դարձել եմ ես տուն,
Բոլորն առաջվանն է կրկին,
Նորից դու հին տեղը նստում,
Շարժում ես իլիկը մեր հին.
Մանում ու հեքիաթ ես ասում,
Մանում ես անվերջ ու արագ,
Սիրում եմ պարզկա քո լեզուն
Ձեռներդ՝ մաշված ու բարակ։

Նայում եմ, մինչև որ անզոր
Գլուխըս ծնկիդ է թեքվում.
Նորից ես մանուկ եմ այսօր,
Դրախտ է նորից իմ հոգում։
Արևը հանգչում է հեռվում,
Գետից բարձրանում է մշուշ,
Հեքիաթդ անվերջ օրորում,
Իլիկդ խոսում է անուշ...

Ահով ննջող խրճիթները, խեղճ գյուղերը, տխուր դեմքերը, մելամաղձիկ երգերը, ավերակ տները, զանգակների զարկերը, հին տրտունջները՝ այս ամենը առարկայացնում են միասնացած հայրենիքի և ժողովրդի պատկերը, բանաստեղծին թելադրելով տունդարձի՝ վերադարձի տեսիլները։ Այդպիսի մի տեսիլ էր Մորը նվիրված վերոբերյալ բանաստեղծությունը։ Այդպիսիք են «Հովիվներն այնտեղ կրակ են արել», «Լինեի շոբան սարերում հեռու» և նման ըղձասացությունները, ուր Վ. Տերյանը երևում է իր խոնարհ ժողովրդին անմնացորդ ձուլվելու, նրա էության մեջ «հալվելու և ծավալվելու» ուխտով։

Սիրո, տխրության, աշնանաթափի, մթնշաղների, «բեկված հոգիների» քնարերգուն բանաստեղծական առաջին քայլերից սկսած դիմել է նաև այսպես ասած «քաղաքացիական մոտիվների»։ Դրա արտահայտությունն են ոչ միայն հայրենի տան ողբերգական ներկայի և սպասվող լուսավոր ապագայի ներշնչանքները, այլև դեռ ճեմարանում ծրագրած «Փշե պսակ» շարքի, նաև «Վերադարձի», նաև կենսագրության վերջին շրջանի շատ բանաստեղծություններ։ Դրանց մեջ է հանրահայտ «Լուսաբացին նա բարձրացավ կախաղան»-ը՝ հայոց բանաստեղծության պատմության մեջ երբևէ ստեղծված նահատակության լավագույն պատումներից մեկը.

Լուսաբացին նա բարձրացավ կախաղան
(Արևածագ, օ՜, արշալույս արյունոտ),
—Կանգնած էին զինվորներն ու քահանան,
Դունատ ու լուռ կանգնած էին նրա մոտ։

Անաարակուսելի է բանաստեղծության շարժառիթը։ Դա արձագանքն էր 1905 թ. հեղափոխության շրջանի «արյունոտ» անցքերի։

Ուրիշ բռնկանգակություն ունեին 1905—1908 թթ., միանգամայն ուրիշ 1910 թ.՝ ցնծության, հոգու հարության, «գայրույթի ու կռվի» թվականը, որը հարուցում է համապատասխան զրնգուն, խենթ, ավյունալից հնչերանգներ, վերադարձի խոսքեր.

Մենության խավար զնդանից կրկին
Ես վերադարձա հզոր և հպարտ,
Եվ ինձ ողջունեց աղմուկը զվարթ,
Ու նոր խնդությամբ այրեց իմ հոգին...

Ուզում եմ վազվա ցնծության գուշակ,
Կարոտես նետած լուսեղեն հեռուն,
Վառել երգերը որպես դրոշակ,
Ու մեռնել, որպես հերոսն է մեռնում...

Զափազանց ուշագրավ է այն պարագան, որ 1910 թ. սկսած մինչև տասնամյակի վերջը Վ. Տերյանի քնարերգության մեջ պարբերաբար հայտնվում է «հերոսության»՝ մարտիրոսության մոտիվը։ Այդ միտումի արտահայտությունն էին Ստ. Շահումյանին նվիրված Գազելը («Սիրտդ որպես վառ ատրուշան...»), մաքառման և ազատության կանչերը, կյանքի ճակատագրական թվականին՝ 1919-ին գրած ինքնահանձնարարականը.

Ուշ ծաղրածու զվարճարեր, ոչ խոսքերի վարժ վարպետ—
Կոչված ես դու վերին կամքով որպես պայծառ մի աստղ։
Դու մարգարե պիտի լինես, խաչակիր և մարտիրոս,
Խարուկ ու խաչ պիտի ելնես—ոչ իրը ստրուկ՝ այլ հերոս։
Խոսքդ պիտի լինի դաշույն, սիրտդ՝ կրակ ահավոր,
Պիտի լինես հեզ, որպես որբ, վեհանձն, որպես թագավոր...
Պիտի բանաս սիրտդ բորբոք ամեն սրտի դեմ,
Պիտի լինես միշտ հրահրուն և միշտ լուսեղեն։
Եվ սնոտի օրերի մեջ պիտի վառվես որպես ջահ,
Որպես բարիք ընդունես միշտ և՛ տանջանք, և՛ մահ...

Խաչակիր-մարտիրոս-նահատակի կերպարը, իհարկե, նորություն չէր հայ գրականության համար, այդ կերպարը, սկսած V դարից (Եղիշեի պատմությունից) մինչև XX դարասկիզբ, ուղեկցել է հայ գրականությանը իբրև նրա առանցքային կերպարներից մեկը։ Այս կետում Վ. Տերյանի ավանդն այն էր, որ հերոսական նահատակության թեման նա դիտեց իբրև ժողովրդական բազմությունների իդեալների համար մղած պայքարի արտահայտություն։

Սա նորություն էր «հերոսականի» գեղագիտության մեջ։

Թեև ասացինք, որ Վահան Տերյանի քնարերգությունը չի ունեցել զարգացման աստիճաններ, այսպես ասած՝ «անցումային որակներ», սակայն նրա հետ է եղել նոր բանաստեղծական ճանապարհի զգացողությունը, մանավանդ 1910-ական թթ. ռուսական կայսրության սահմաններում իրականացվող հասարակական-քաղաքական տեղաշարժերի՝ «հեղափոխական ցնցումների» հարուցած նոր երգի ստեղծման շարժառիթով։ Այսուամենայնիվ, իր իսկ խոստովանությամբ, Վահան Տերյանը ի վիճակի չի եղել դուրս գալ նոր հուն՝ հաղթահարելու «տխուր խոսքերի» քնարերգության կաշկանդումները։ Այստեղ դեռ է խաղացել ոչ այնքան իներցիան, այլ այն զգացողությունը, որ, չնայած ներքին հզոր շարժումներին, կյանքը դեռևս չի բացել իր լայն թևերը՝ լիաբուռն ազատություն բերելու հոգեկան մենության սովոր մարդկանց։

«Ցոլակին» (Ցոլակ Խանդաղյանին—Ս. Ա.) վերնագրով չափածո նամակում Տերյանը «հեռավոր ընկերոջը» հայտնում է իր ճշմարտությունը.

Դու կամենում ես նոր երգեր լսել
(Անկատար մնաց իմ խոստումը հին),
Տխուր խոսքերից հոգնել եմ ես էլ,
Բայց կյանքն է, տերը՝ մենք նրա գերին...

Հոգիս լցված էր երգերով հպարտ,
Բացվում էր իմ դեմ մի նոր ճանապարհ,
Բայց հանկարծ երգս մնաց անավարտ,
Ու նորից տիրեց իմ սրտում խավար։

Մի ուրիշ խոստովանության մեջ, որի սևագրությունն է հասել մեզ, Վ. Տերյանը գանգատվում է, որ իր «մեղմ ու ցավագար» երգի սահմանագիծը ինքն անկարող է հաղթահարել, որ հին, «վշտոտ երգը» կրում է իբրև խաչ.

Զեզ ճչան է հարկավոր, և փող, և թմբուկ,
Իսկ իմ երգը միշտ տխուր, երգըս վշտի ու սիրո,
Եվ ես անոգ, ես անոգ, որպես մի մանուկ,
Ես երգիչ եմ, երազող,
Աշխարհի դեմ, շարի դեմ,
Ողջակեզ եմ
Զոհ...

Այնուհետև՝

Մահապարտի պես եմ ես—
Համր ու անզոր ձեր առաջ...

Այսուամենայնիվ, կենսագրության վերջին հանգրվանում (1917—1919) Վ. Տերյանի քնարերգության մեջ, դեռ սաղմնային վիճակում, հայտնվում են նոր գծեր, առավելապես գործողության կողմնորոշումով, նաև նոր գույներ ու նոր տոնային-շեշտային հատկանիշներ։

Վ. Տերյանի բանաստեղծական աշխարհի նորացումները կապվում են ոչ միայն արտահայտչության նոր եղանակների ներմուծման, պայթյունային տոների ուժեղացման՝ «ստատիկայի» հաղթահարման, այլև բանաստեղծական տեսադաշտի լայնացման հետ։ Ինքնասուզումներից նրա քնարը ծավալվում է դեպի համամոլորակային առծաղծումներ։

Նորդարյա հայոց պատմության առեղծվածներից մեկն է այն պարագան, որ Վահան Տերյանի պես նուրբ, մեղմաձայն, տաք հուզմունքներով ընթերցողներին գերող ու վարակող քնարերգուն ի հայտ է բերել հանրային գործչի բացառիկ հարուստ տվյալներ։ Վ. Տերյանի նկարագրի նման ուղղության մեջ դեր են ունեցել և՛ իր տոհմածառից՝ նախնիներից փոխանցված «գենները» (մեմուարիստների վկայությամբ Տեր-Ղազարից մինչև Տեր-Սուքիաս եղել են շրջապատում ընդգծվող, վառ անհատականություններ), և՛ 1900—1910-ական թթ. ռուսաց իրականությունը, ուր նա ստացավ քաղաքական մկրտություն, և՛, առավելապես, հայ ժողովրդի համար ստեղծված դժվարին կացությունը, որը կարիք ուներ Վ. Տերյանի նման անվեհեր հանրային գործիչների։

Վահան Տերյանը դարասկզբից՝ ճեմարանական տարիներից արդեն ապրում էր իր ազգային իրականության և, առհասարակ, կյանքի արմատական վերածնության լայնաշունչ ծրագրերով։ Իրեն մտահոգող կյանքի վերանորոգման ծրագրերը նա ձևակերպել է ռուս մեծ վաթսունականի՝ Ն. Դոբրոլյուբովի հայտնի խոսքով. «Ե՞րբ է գալու իսկական օրը»։ Տերյանը ոչ միայն սպասում էր իսկական օրվա գալստյանը, այլև եռանդուն ու անձնազոհ մասնակցություն էր բերում Ռուսաստանի կայսրության մեջ ապրող ժողովուրդների «նոր արշալույսների» կերտմանը։

Հանրային գործչի նրա կեցվածքը արտահայտվում էր երկու կերպ, մեկ՝ հեղափոխականի, մեկ էլ՝ մտավոր շարժման ազդարարի։ Արդեն Լազարյան ճեմարանում, հավանաբար Ալեքսանդր Մյասնիկյանի հայտնվելուց հետո, Վահան Տերյանը ներգրավվում է ժամանակի քաղաքական բուռն անցուդարձի մեջ, հանդես է գալիս ցարական «ղզվելի կարգերի» (իր խոսքերն են) դեմ ուղղված աշակերտական խռովությունների շարքերում։ Ճեմարանը ժա-

մանակավորապես փակվելու կապակցությամբ Վ. Տերյանը 1906 թ. սկզբին իր համախոհների՝ մերձավոր ընկերների հետ «հեղափոխական պրոպագանդայի» նպատակով գալիս է Կովկաս («Ճեմարանում ուսումը դադարել է և ես եկա Կովկաս,— գրել է 1906 թ. փետրվարի 9-ին, Ս. Օթարյանին)։ Վերադառնալով Մոսկվա և դառնալով համալսարանի ուսանող, Վ. Տերյանը ավելի մեծ եռանդով է մասնակցում հասարակական-քաղաքական անցուդարձին։ Նա մասնակցում է Ալ. Մյասնիկյանի գլխավորած «Հայ հայրենակցական միության» հավաքույթներին, ուր արծարծվում էին նաև ազգային-քաղաքական խնդիրներ։

Բանաստեղծի հակացարական տրամադրությունների՝ «հակապետական» գործունեության համառոտ ամփոփագիրն է տերյանագետ Սաքո Սուքիասյանի հրապարակած «Վահան Տերյանը ցարական օխրանկայի տեսադաշտում» հետազոտությունը,[10] ուր բազմազան փաստաթղթերով վավերացվում է Վ. Տերյանի՝ իբրև ցարիզմի համար «քաղաքական անբարեհույսի» փաստը։ Կարճ ժամանակով հայտնվում է Մոսկվայի «Բուտիրյան» կոչվող բանտում, ազատվելուց հետո անցնում է Բաքու, ուր հանդիպումներ է ունենում նավթաշխարհի բանվորների հետ, որոնք նրան ներշնչում են առույգ տրամադրություններ։ «Հոգեպես առույգ եմ, ինչպես երբեք»,— գրում է իր մտերիմներից մեկին՝ Օնիկ Օհանջանյանին։ Բաքվում Տերյանը հանդիպում է նաև Ալեքսանդր Մյասնիկյանի հետ, որը, իր ասելով, նրան ներշնչում է ապագայի հանդեպ լուսավոր հավատի ապրումներ։ «Հոգիս զարթնել է նոր կյանքի համար»,— մի նամակում բերում է իր բանաստեղծական նշանակալից տողը և ավելացնում՝ «բայց դեռ չկա այդ կյանքը, իսկ արդյո՞ք կլինի երբևէ, դա անհայտ է»։ Մի ուրիշ նամակում, դարձյալ գրված 1907 թ., ասում է. «Անցյալն ինձ համար մեռավ, ողջունում եմ ապագան»։

Ճեմարանական, համալսարանական, ապա նաև կենսագրության պետերբուրգյան շրջանի հեղափոխական գործունեությունը և նամակներում արտահայտած դատողությունները վկայում են Վ. Տերյանի տեսական բարձր զինվածությունը, գործնականությունը, վարքագծի ճշմարտությունը։ Բնորոշ են հատկապես 1907 թ. հուլիսի 22-ին Օնիկ Օհանջանյանին գրած նամակի այն տողերը, որը ներկայացնում է հանրային գործչի իր պատկերացումը. «Մի բան միայն կարող եմ ասել, որ քանի գնում, այնքան ամրանում են իմ մեջ իմ հիմնական սկզբունքները և քանի գնում, այնքան չմտածված զգայական խոյանքը փոխարինվում է իմ մեջ խոր, համոզված էնտուզիազմով։ Ասեմ ավելի պարզ։ Իմ խորին համոզմունքով ոչ մի գործ չի կարող կատարվել առանց զգացմունքի։ Առավել ևս հասարակական գործը։ Սակայն, վերջին դեպքում (երբ գործը հասարակական է), ավելի քան որևէ այլ ժամանակ, բանականությունը պետք է ընթանա զգացմունքի հետ ձեռք-ձեռքի տրված»[11]։

Անցնելով աշխարհայացքային զարգացման որոշակի փուլեր՝ պատանեկան տարիների «նեոնարոդնիկական» հայացքներից դեպի «հումանիստ ուտոպիստների» ալտրուիստական դավանանքը (սոցիալիզմի իբրև «բարոյական եղբայրության» ըմբռնումով), այստեղից էլ դեպի հասարակական երևույթների մարքսիստական մեկնաբանությունը (այստեղ անպայմանորեն դեր է ունեցել նրա անձնական մտերմությունը Ստ. Շահումյանի հետ), Վ. Տերյանը ոտք է դնում հեղափոխական կոնկրետ գործողության ասպարեզ։ 1916—1920 թթ. նրա գործունեությունը դրա վառ ապացույցն է։ Պատահական չէ, որ իբրև «Հայկական հարցի» խորհրդատու Վ. Տերյանը սովետական պատվիրակության կազմում 1918-ին մասնակցում է Բրեստ-Լիտովսկի բանակցություններին (Վ. Ի. Լենինի հանձնարարականով), այնուհետև իր ձեռքն է վերցնում Ազգությունների գործերի Կոմիսարիատի հայկական գոր-

10 Էջեր Վահան Տերյանի կյանքից. Երևան, 1959, էջ 2—24։

11 Վ. Տերյան. Երկերի ժողովածու. հ. 3, էջ 167։

ծերի կոմիսարիատի փաստական ղեկավարությունը (կոմիսար Վ. Ավանեսովը Կենտգործկոմի քարտուղարն էր) և այլն։

Հեղափոխության հրձանքների մեջ նետված Վահան Տերյանը, ինչպես վկայում են վավերագրերը, պետական-գիվանագիտական ծառայությանը զուգընթացաբար զբաղվում է նաև հայ ժողովրդի ճակատագրի համար մեծագույն նշանակություն ունեցող խնդիրներով։ Ամենից ավելի նշանակալից գործը, որ կատարում է, Թուրքահայաստանի մասին նրա գրած Զեկուցագիրն է և Դեկրետի նախագիծը (վավերացվել է 1917 թ. դեկտեմբերի 30-ին), որն արծանանում է Վ. Ի. Լենինի հավանությանը։ 1919 թ. վերջում գրած մի նամակում Տերյանը գրում է. «Ներկայացրի մի Записка Հայաստանի (Տաճկ.) մասին և проект декрета об Армении... Այսօր զրույց ունեցա այդ առթիվ ընկ. Լենինի հետ, որին բացատրեցի, թե ինչո՛ւ անհրաժեշտ է առայժմ զորքերը չհանել Հայաստանից և պայմանավորել Հայաստանի ինքնորոշումը աքսորվածների և փախստականների վերադարձով և այլ գարանտիաներով»[12]։

Վ. Տերյանը ազգությունների կոմիսարիատում աշխատելու ընթացքում մեծ գործ է արել Հյուսիսային Կովկասի ստանիցաներում կենտրոնացած բազմահազար հայ գաղթականության նյութական և կուլտուրական կարիքները բավարարելու համար։ 1918 թ. ամռանը նա է գլխավորել Հյուսիսային Կովկաս մեկնած հատուկ պատվիրակությունը, որի խնդիրն էր պարենամթերքով, դեղորայքով, զրամով օգնել թուրքական կոտորածներից փախստական արևմտահայության բեկորներին։

Վահան Տերյանի հանրային գործունեության մեջ առավելապես մեծ տեղ են գրավում մշակութային շինարարության խնդիրները՝ կապված հայոց պետականության նոր ձևի՝ «Հոգևոր Հայաստանի» կառուցման հետ։ Ինչպես Հովհ. Թումանյանը, Վահան Տերյանը ևս ազգի առաջադիմության մշակութային տարբերակի դավանանքին էր և գտնում էր, որ պետք է բոլորակողմյան խթանել հոգևոր արժեքների կատարելագործումը։ Տերյանը գրում է. «Բացի արտաքին արգելքներ հաղթահարելուց, ամեն մի՝ ազգ կազմելու ցանկություն ու կամք ունեցող ժողովուրդ անդադար պիտի ստեղծի այն արժեքները, որոնք նրա ինքնության առհավատչյաներն են»[13]։ Այնուհետև՝ «Հոգևոր Հայաստանի» կառուցումը ծանր ու տևական աշխատություն է պահանջում, անթիվ կյանքերի տոկուն հավատ և գիտակցություն, անարյուն, բայց ազնիվ, գուցե ավելի դժվար, ավելի ահավոր զոհաբերում, քան արյունի զոհաբերումը»[14]։

Տերյանը ոչ միայն տեսականորեն էր առաջադրում «Հոգևոր Հայաստանի» ծրագրերը, այլև մի շարք քայլերով գործնականացնում էր իր քաղաքական ծրագրերը։ Դրա արտահայտությունն էին «Դարուն» ալմանախի հրատարակությունը, «Պանթեոն» հրատարակչական ընկերության կազմակերպումը (գլխավոր խնդիրներից մեկը համարում էր համաշխարհային գրականության թարգմանությունը), Եռանդուն մասնակցությունը՝ Մ. Գորկու խմբագրած «Сборник армянской литературы» գրքին, պարբերական մամուլի կատարելագործման մտահոգությունները, հայոց արվեստի «առեղծվածի» բացատրության համար գործադրած ջանքերը, վերջապես՝ ազգային լեզվի և գրականության զարգացման լայնահուն ծրագրերը, որին էր նվիրված 1914 թ. կարդացած «Հայ գրականության գալիք օրը» պատմական դասախոսությունը։

Վահան Տերյանի ծննդյան հարյուրամյակը՝ նշանակալից հոբելյանական տարեթիվը, գրականագետ-բանասերներին, լեզվաբաններին, արվեստաբան-

---

12 Նույն տեղում, էջ 480։

13 Նույն տեղում, հ. 2, էջ 315։

14 Վ. Տերյան. Երկերի ժողովածու. հ. 2, էջ 317։

ներին, հասարակագետներին, մշակութագետներին թելադրում է նորովի, արդիականության դիրքերից լուսաբանել մեծ բանաստեղծի, խորունկ մտածողի, հասարակական եռանդուն գործչի ժառանգությունը, լուսաբանել գրական-պատմական, փիլիսոփայական, գեղագիտական տեսանկյուններով, ասպարեզ հանել նրա ժառանգության անանց նշանակությունը ազգային պատմության և մշակույթի ճակատագրի մեջ։

ВААН ТЕРЬЯН

(К 100-летию со дня рождения)

Доктор филол. наук С. Б. АГАБАБЯН

Резюме

Начало XX века поставило перед армянской поэзией новые задачи, которые предполагали новые, нетрадиционные решения. В то время как поэзия XIX в. была скована определенными тематическими рамками, преимущественно национальной истории и освободительной борьбы, поэзия начала XX в. рядом с национально-политическими чаяниями открывала новое русло для личных переживаний человека, его внутреннего духовного мира. Одним из творцов художественного переворота в армянской поэзии стал Ваан Терьян, певец тончайших человеческих чувств и глубоких переживаний. Некоторым из богатейших пластов его творчества и посвящена эта статья. В статье освещаются также страницы общественной деятельности Ваана Терьяна, его заслуги перед Октябрьской революцией и вклад в культурное возрождение армянского народа.